

Հաղկերտ յաղթելած ու փախստական՝ անողորմելի
 թշնամիներու սուջէ, թափառական կրպղտներ Վէր
 մանի, Սաղատստանի ու Խորասանի գաւառներուն մէջ, ու
 կարծելով թէ դեռ կրնայ գտնար հաւատարիմ հպա
 տակներ Սէրպի ընտկիչներուն մէջ, մտաւ այն քաղաքը

Անգղիոյ վեհափառ թագուհին, ցանկալով ինքը կաթ տալ իր իշխանազուն աղջկանը՝ արժան համարեցաւ ջնջել ան պալատական սովորութիւնը, որն որ կարգիւն թագուհիներուն իրենք զինեցունէլ գաւաակներն:

ԳԼԳՂԻՆ

Խորհրդարանը ուղիով որ ճիշդագոյն պատահաբարական նաւահանգստին շինութիւնը օր առաջ կատարելի, արժան համարեցան 300 հազար ֆունտը աւելցնել նոյն շինութեանը համար սահմանաժողովարին վրայ: Ահապէտեւ աս ծանր գործին համար շատ ծախք ըլլայ պիտի, բայց կառավարութիւնը քիչ ատենի մէջ կրնայ քաղել իր ըրած ծախքերուն պտուղը. անոր համար անդադար կաշխատի շուտով վերջացնել աս երևելի շինութիւնը որն որ հասարակօրէն կրկարծուի թէ 8-10 տարւան մէջ հազիւ կրնայ կատարելի, ու 1500,000 ֆունտը չափ ծախք պիտի ըլլայ կրան:

Կերեայ թէ կառավարութիւնը մէկ կողմէ ձգեւ հիմայ Անգղիոյ տէրութեան հետ ըլլալու աւել տրական դաշնադրութիւնը. որուն կատարումը հիմնական պարագաներուն մէջ դիւրին բան չըլլալը յայտնի է: Բանգի նախ աս գործը ըստ ինքեան խիստ դժուարին է գլուխ տանիլ. երկրորդ Կաղղիայի ու Բենգիոյ մէջ իրեք տարիէ ի վեր եղած քաղաքական զիջումները ալ աւելի կը դժուարացնեն աս դաշնադրութեան կատարումը: Եւ յոռւ աւմենայնիւ Կաղղիա շատ հարկաւորութիւն ունի իրեն արհեստագործ ապրանքները քշելու տեղանքը շատցնել: Լաւրոպայի քաղքներէն աս մասին խիստ քիչ օգնութիւն կրնայ քաղել. անոր համար պէտք է որ կառավարութեան դիտումը ու ջանքը ուրիշ տեղանք ալ տանի, ձեռքէ չի ձգելով Լաւրոպայի գանաղան երկիրներու վաճառանոցները:

Հարուսային Բմբրիգայի Տէրութեանց մէջ եղած առուտուրները աչքէ անցունելով, իսկոյն կրտեանը, ի որ մեծ գործառնութիւններ կը ըլլայ կերպ կերպ անդրանց փոխանակութեան մասին ան երկիրները, ուր տեղ դիւրութեամբ կրնան քշել Կաղղիայէն ելած շատ ձեռագործները ու բնական ապրանքները: Անգղիացիները շատ աղէկ իմացան Բմբրիգայի վա-

ճառանոցներուն ներկայ ու ապաւնի կարեւորութիւնը. ու աս պատճառով միշտ աշխատեցան ու կաշխատին առևտրական դաշնադրութիւններ ընել ան կողմերու Տէրութեանց հետ: Եւ ատեն չէ որ Լանտալա խորհրդարանը յատուկ պաշտօնատար մի խրկեց Իիօ Լանիլո, որ Պրեզիլի ու մեծ Բրիտանիոյ մէջ առևտրական դաշնքներ հաստատէ, բայց չի յաջողեցաւ ու հոտարակօրէն չի կարծել որ յաջողի: Եւ պարագաներուն մէջը Կաղղիոյ կառավարութեանը հարկէ անշուշտ նորոգել Պրեզիլի հետ ունեցած առևտրական դաշնադրութիւնը որուն պայմանաժամը շատ ատենէ ի վեր անցեր է:

ՍՊԱՆԻԱ

Եւ երկրին վիճակը շատ գեշ է. ապստամբները օրէ օր կը գործնան ու կը շարունան: Բաւասունը ու թը նահանգներէն, որոնցմէ կը բաղկանայ Սպանիան երսունը մէկը ապստամբներուն ձեռքն են. որոնք 135,535 զինուոր պատրաստ ունին աղբային պահապան գործերէն: Անայած տասներեօթը նահանգները, որոնք հաւատարիմ են միշտ կառավարութեանը, միայն 75,000 աղբային պահապան զօրք ունին: Եւ սոս ամենայնիւ հոտարակօրէն չի յուսացել որ ապստամբները առաջ ելածն են, որովհետեւ թագուհին փոխանորդ Վիթթուարի գեղքը տակաւին շատ աղբու միջոցներ ունի գործքի զինելու իր թշնամիներուն դէմ:

Եւ դժբաղդ երկրին մէջ խռովութիւնները ու աղմուկները այնքան մեծ ու տարածուած են ամէն կողմէ, որ շատ դժուար կերեայ հանգստութեան ու բարեկարգութեան հաստատուիլը քիչ ժամանակի մէջ:

ՌՈՒՍԻԱ

Վեհափառ ռուսաց կայսեր կառավարութիւնը երկրի ճամբաներուն շինութիւնը շուտով առաջ ելածն են համար, արժան համարեցաւ զօրքերու բանակը աս օգտակար գործին վրայ աշխատցնել: Սկստի արդէն հրաման տրեցաւ Պետարապլայի և ուրիշ մերձակայ կառավարութեանց մէջ եղած զօրքերուն որ ներսի կողմերը դան:

Հոս թողունք խօսիլ Բուքարէսի Ահմետ պատմագիրը: Եւ որ պատմութիւնը կը նկատէ մեզի Սասանեան իշխանին աղետալի վախճանին վրայ զո մանրամասն պիտանի պարագաներ որ պարագայ առգը կը փնտրուին ուրիշ տեղ:

«Իբրեւ Մէրդին բնակիչները իմացան որ հազկերտ Պարսկաստանը ձգելով՝ հասեր էր իրենց քաղաքը, նախատինքնով լեցուցին խեղճ թագաւորը. նախ կուգէին բռնել զինքը ու մեռցունել: Բայց զրեցին թանձաթախ թուրքաց թագաւորին այսպէս. «Պարսից թագաւորը առապներուն առջեւն փախելով հաս ու մեր քաղաքը. «անոր չօգնենուս ի դաւ» քու բարեկամութիւնդ նախապատիւ կը համարենք քան վնասը: Եւ նրա կը ցանկանք որ գաս մեր երկիրը որպէս զի կարենանք ազատիլ «անկէց ու քեզի տալ քաղաքը»:

Թանձաթախ այս Մէրդին բնակիչներուն նամակը առնելուն պէս, ճամբայ ելաւ դէպ ի Մէրդ ու մօտեցաւ անոր քաղաքին բանակով մը: հազկերտ իմանալով անոր մօտենալը, գիշեր ատեն մինաւորիկ փախաւ պալատէն ուր ինքը ապաստաներ էր: Իր ծառաներէն ամենին

մէկը հետը ընկերացած չէր. մարդ ալ չէր գիտեր իր դացած ճամբան: Իսկ զժ թագաւորը աս գիտ ան զին թափառելով՝ վերջապէս ճրագի ըստ մը կը տեսնէ Մէրդին քովէն անցնող գետին եղեղքը. կը քալէ դէպ ի այն կողմը ու կը տեսնէ ջաղացական մը որ զբաղեր էր իր ջաղացը բանեցունելու: Կը մօտենայ անոր. «Ես ողորմելի մարդ մըն եմ, կը պօսայ, թշնամի մըն ալ ինկեր ետեւս զիս կը հալածէ. այս գիշեր շնորհէ ինձի ապաստանաւան մը քու տանդ մէջ ու վաղը քեզի այնչափ կը հարբատացունեմ որ բոլոր կենացդ մէջ նեղութիւն չես տեսներ:» Միջին ներս, կը պատասխանէ անոր ջաղացական, ու կեցիք հոն: հազկերտ մտաւ ջաղացը ու բոլոր մտնողը ու անհանգստութիւն իր միտքէն հեռացնելով ընացաւ: Չ աղացականին գերիները տեսնելով անոր առնակ անխոհեմութեամբ հանգչիլ ու քնանալը, առին մէյմէկ գաւաղան ու այնչափ ծեծեցին որ մինչև մեռաւ: Անկէ ետեւ կողոպտեցին անոր բոլոր ոսկիէ արծրի զարդարանքները թագն ու հագուստները, ու ոտքէն քաշելով անոր տարին մինչև Մուրկազ գետը ու հոն նե-

ՁԱՆՁԱՆ ԼՈՒՔԻ

Օմբուհա, 16 հուլիս:

Օմանեան կառավարութեան շոգին աւել Եւստիքի Պահարի, անցած շաբաթ Կոստանդնուպօլիսէն հասաւ հոս, ու ներսի կողմերէն եկած զօրքերէն 790 հոգի առնելով կրկին վերադարձաւ յիշեալ մայրաքաղաքը:

—Եւստիքի պատեւազանեան շոգին աւել Սաւրիա Լանա, իրեքշաբթի օրը Սալթայէն եկաւ. ուր տեղ տարեր էր Եւստիքի երկրորդ ծովագետ սրարոն Պանտիկեան:

—Երկու յոյն իրեքշաբթի օրը կուլ ընելով մէկ զմէկու հետ, մէկը գանակը հանելով կարեւոր վերաւորեր է իր ընկերը. որուն համար առողջութեան յոյս չի կայ: Եւ չարագործը փախած է հիմայ, բայց տեղոյս կառավարութեան աջալուրջ հոգով զննութեամբ կը յուսանք որ ձեռք պիտի որ անցնի, ուր տեղ որ փախած ըլլայ:

Երախտագետ սրտով կը լիութեանք ծանուցանել հասարակութեանը Վեհափառ Կայսեր ամենայն ռուսաց հայրազուծ խնամքը իր հայազգի հարաւակներուն վրայ. որոնց աղբայրական խնդրոյն ու փափագանցը համեմատ, ու Եւրօպայի Եւրասիան բաղադրական մասին երեք տարիէ ի վեր զգուշաւոր և ուշադիր հրատարակութեանը վրայ վստահանալով, Եւրօպայի կառավարութիւնը բարեհաճեր է մարդասիրաբար հրաման տալու, որպէս զի յիշեալ մեր օրագիրը համարձակ մտնայ Ռուսաստանու ամէն քաղքները:

Եւ դժուար ու աղբօղետ գործին բարեյաջող կատարումը կը պարտաւորինք Տիխիսու հայոց ու սոսմարանին արժանապատիւ և զիտնական հակոր վարժապետին աղբայրական գովելի աշխատանցը ինչպէս որ հետեւեալ նամակէն յայտնի կը ըլլայ: Ուստի մեր սրտին մտերիմ երախտագիտութիւնը հրապարակաւ յայտնել անհրաժեշտ պարտաւորութիւն կը համարինք մեզի:

Եւ իւ վերապատու Եւրօպայի Արարատեան պարսն Վուհաս Գ. Պարագարեան:

Ի Տիփիս, 29 մայիս 1845 տար:

Ձեր ազնուութեան անցեալ Հոկտեմբեր սոսոյ 2, ին

տեցին: Ա աղվան օրը որ թանձաթախի Մէրդ մտնելու օրն էր, քաղքին բնակիչները ելան հազկերտը փրկաւորուելու ու ամէն կողմ ցրուեցան զանի գտնելու: Վիպուածով հասան ջաղացը ու հարցուցին ջաղացականին թէ արդեօք տեսնէր է ինքը հազկերտ թագաւորը: «Ես անոր վրայ զո ամենին լուր մը չունիմ, պատասխանեց ջաղացականը: Վառաւոր հագուստով գերի մը կուգայ անատնը պատասխանելու: Մէրդին բնակիչներուն մէկուն քըմին անուշ հոտ մը կուգայ գերիին վրայէն: Եւս գերին կը բռնեն, կը մերկացունեն ու վրան կը դնեն ոսկեզարդ հագուստը ծանրագին անուշահոտ իւղերով օծած որ կը հաղնէր հազկերտ: Բնակիչներուն վրայ ալ փրկաւորելով՝ ամէն մէկուն վրայ գտան յայտնի ապացոյց մը (խապի մը) իրենց յանցանքին: Աղէկ ծեծմ' ալ ուտելուն ետեւ շիտակը խոտով անցան:

Թանձաթախի հրամանով սուղակները (տալըճները) փրկաւորեցին Մուրկազի մէջ ու գտան հազկերտի մարմինը և բերին առջև: Թագաւորը այս տեսիլքէն շատ արցունք թափեց ու հրամայեց զմեռել (պահապարակը ը-

զրաժ սիրոյ նամակիդ հետ ընկալայ երեք հատոր օրա-
գիր անուանեալ Արշալոյս Արարատեան, որն որ Չեր աշ-
խատասիրութեան պատուէն է. և շատ ուրախացայ Չեր
այսպիսի ազգագրութեան գործըք վրայ. մինչև ասանց երես
պաշտութեան կարող եմ ասել որ Արարայի լուսաւոր
տէրութեանց օրագրութիւններէն ամենէին ստոր չի
մնար. և յիրաւի ինչպէս կ'զգամ բոլոր ազգը պէտք է
շնորհակալ լինել այս Չեր հայրենասիրական վաստա-
կոցը համար. աւելորդ է ինձ երկար բանիւ գովել այս
Չեր գործը. ըստ որում ամենայն բանաւոր և խոհական
մարդ կարող է ինքնին հասկանալ ասոր օգուտը: Չեր
յանձնարարութիւնը, առաջի կայ ստորակային օգուտը,
և իմ առ Չեր եղեալ ճշմարիտ յարգանքս մէկ գովելի
խրախոյս մը տուին ինձ, Չեր նամակը և մէկ հատոր օ-
րագիրը թարգմանելով ի Ռուս լեզու, ինչորպէս մա-
տուցանել զլիաւոր Աստուածային Ազգաստեւ այս կողմը
եղեալ նահանգաց, Տեառն Վեներալ Լաւրեանդ Վե-
ներալ Օտինֆանդօր Աւստրիացի, ինչորպէս Վերին
Բարձր գերազանցութեան հրաման առանց արգելանց
ստանալ այս Չեր օրագիրը. և տարածանել բոլոր Ռու-
սաստանի Հայոց մէջ: Վերին Բարձր գերազանցութիւնը
որ ներկայ դարուս մէջ վերին տեսչութեամբը Ռուսաց
ամենողորմած ԱՆՏՈՒՆԻՆ առաքեցաւ այս կողմին
յատկական միութարութեանը և բարեկարգութեանը
համար իր խոհմէ և իմաստուն կառավարութեամբը և իր
անօրինակ ջանքովը ուսումնական և քաղաքական բարե-
կարգութեանց մէջ, ինչորպէս բարձրագոյն խորհր-
դարանը միջնորդ եղաւ այս իմ խնդիրս կատարելու:

Ռուսաց հզոր տէրութիւնը որ ամէն ժամանակ պատ-
րաստ է, իւր հպատակաց բարի և օրինաւոր խնդիրը կա-
տարելու և միանգամայն կրցանկայ անոնց լուսաւորու-
թիւնը, այս բանիս վրայ ցոյց տվեր էր իւր կատարեալ
հաճութիւնը, և այս ցանկալի հաճութիւնը յայտնեց
ինձ Վերին Բարձր գերազանցութիւնը ամսուս 25 ին այս
կողմի գաւառապետին ձեռամբը: Հաղորդելով Չեր այս
ուրախաւիթ լուրը, կրննորեմ այս իմ նամակս հրատա-
րակել Չեր օրագրութեան մէջը, և իմ մասնաւոր աշ-
խատանքս միաւորելով Չեր ազգագրութեան քրտանցը հետ,
առաւել ևս զօրանալ և շարունակել այս Չեր պատուա-
կան գործը մեր ազգին միտքը լուսաւորելու համար, և
այս անմեղ զօրանքով հեռացնել անոնցմէ զանազան
անօգուտ զօրանքները և մանաւանդ բանաստեղծ, որ
թերեւս այսպիսի միջոցաց պակասութեանէն մեր ազգին

ննլ) մարմինը հաղաւթաւոր ըլլայ եւ թաղել թագա-
ւորական արհնէ եղած մարդու մը արժանի պատուով:
Յաղկերթի դիակը զրին դադարի մը վրայ, տարին Պարս-
կաստան ու թաղեցին այն տեղը ուր կը հանգչին Քա-
խանեանց ցեղին թագաւորներուն մարմինները: Իսկ
ճաղացաւն ու գերինները ամէն ալ սպաննեցին թուր-
քաց թագաւորին հրամանովը:

Եւսպէս եղաւ կրակապաշտ թագաւորներուն վերջին
շառաւիղին ողբալի վախճանը: Եւսոր հետ ըմբոստ պար-
սից իշխաններուն ազգատոհմը մինչև որ Իսմայէլ Սօֆի
եղաւ գահը:

Եւս արտասուելի դիպուածներուն ատենը առաջները
շարունակելով իրենց յաջողութեան յառաջագիմութիւ-
նը, տիրեր էին Մէտանին որ Սասանեանց թագաւոր-
ներուն մայրաքաղաքն էր: Տգէտ ու բիրտ ըլլալով՝ Կուր-
օրէն կործանեցին կոտորեցին բոլոր արուեստի յիշատա-
կարանները որ Կոտորովի պալատին մէջն էին. պարսից
թագաւորներուն գորգը (սէճատէն) որ մարգարիտներ-
ով ու գոհարներով զարդարած էր, կտոր կտոր բաժնե-
վեցան: Եւսպային դրօշակը, Քաւա անուանի դարբինին

մէջ շատ զօրացեր է: Եւսպ չեմ կրնար գրել ստորա-
գրողներուն յատուկ թիւը, քանզի դեռ հրամանը նոր
հրատարակեցաւ և ցանկացողքն սկսան ստորագրել
որոնց թիւը քանի մը օրէ ետքը կը ծանուցանեմ Չեր:
Իսկական յարգանք մնամ մեծարու բարեկամիդ իմոյ:

Մասնաւոր
Յակոբ վարժապետ Արարատեան:

Տիկիսու հայազգի մեծապատիւ պարոնաց ու բա-
րեաւք հասարակութեան ազգասիրական և ուսումնա-
սիրական եռանդը ի վաղուց յայտնի ըլլալով մեզի,
յոյսերնիս հաստատ է, որ սա բաղնաշխատ ու ազգ-
օգուտ գործոյն յառաջագիմութեանը ու ըստ կարի
կատարելագործութեանը նպատակը համար ա-
մէնքն ալ յօժարամիտ պիտի ստորագրելին Եւսալոյս
Երարատեան օրագրին. որուն նպատակն է հայ-
կազգեան բարեմիտ ազգին մէջ բարեկրթութիւնը
ու ուսումնասիրութիւնը ալ աւելի տարածելու նը-
պատամատոյց ըլլալ, ինչպէս որ քանի մը անգամ
ծանուցեր ենք: Եւս բանիս վրայ բաւականապէս
վստահ ըլլալով Տիկիսու բարեգութ վեճակաւոր
Եւսալոյս Գերապատիւ Սրբազան Կտրապետ Եւր-
Կախիկապետ, իրեն սեփական եղած հայրենա-
սէր ոգին շարժեալ՝ արդէն ինամբ կրտսնի եղեր
(ինչպէս որ իմացանք)՝ Եւսալոյս Երարատեանին
յառաջագիմութեանը համար թէ՛ Տիկիսու և թէ՛
ուրիշ այն կողմի քաղքներուն մէջ: Եւս լուրջ հա-
մարեալով ծանուցանել հասարակութեանը յիշեալ
Գերապատիւ Սրբազանին անխնջ ու ազգասիրական
ջանքը նոյն քաղաքի զպրատան բարեկարգութեանը
ու աշակերտաց ուսումնական յառաջագիմութեանը
համար, կրիութեանք մեր խորին երախտագիտու-
թիւնը անխոստան խոնարհութեամբ մատուցանել
Կորին Բարձր Սրբազանութեանը:

Հայազգի քանի մը յարգի վաճառականներ Եւր-
սիոյ տոնավաճառէն դուռնալնուն՝ թիւստ երթալով
բարեհաճեր են Եւսեան մեծաշուք Գործը աղային
ձեռամբը ստորագրելի Սիւնեաց ինկերութեանը.
որոնց անունները կրիութեանք նշանակել հոս տեղս,
շնորհակալ ըլլալով անոնց ազգասիրական օգնու-
թիւնէն: Եւս յուսանք որ դալ տարի բոլոր ազգասէր

չինած դավաւր տախտակը որ ՎերիտունԻ) զարդարել
տրվեր էր ծանրագին գոհարներով, Վեհինէ՛ տախտակ-
տին (տախտակին) խրկվեցան: Վախտակ (քաղաքի)
անհուն մթերքները որով կը լուսաւորէին ու կը լսէին
պալատը, թաղեցին ու անխնայ ջնջեցին այս գեղար-
ները որ աղ կարծեր էին:

Բայց ամէնէն ցաւալին Պարսկաստանի ու Մեդա-
ցեոց դիւաններուն մէջ պահած ժամանակագրութիւննե-
րուն ցրուելէ որուն մէկ մասը տղաւոր էր Եւսեանդ-
րի զինուորներուն ձեռքէն, որոնց վրայօք յաճախ յի-
շատակութիւն եղած է սուրբ գրոց մէջալ (Եւրդ 6, 12:
Եւսեանք 23: Եւ 1: 3): Կորուստ անդարմանելի որ
խաւարով կը ծածկէ հին Պարսկաստանի պատմութեան
մեծ մասը:

Եւսեանք էր Բիշտատեան ցեղէն զօրաւոր ու քաջ թագա-
ւոր մը ձեռնիւթ թուր: Մեր Խորենացին իր պատմութեան մէջ
գրեց ա չորսուցին կը լսէ ստիկա:

Թարգմանեաց ի գաղղիականէ
Յ. Պ. Թ.

անձինքը, որոնք նոյն տոնավաճառը երթեկեկու-
թիւն կրնեն, յօժարամիտ պիտի ստորագրելին սա
ազգագրութեան ինկերութեանը. որն որ բոլոր հայրենա-
սէրներուն քիչ կամ շատ ձեռնտուութեանը ան-
շուշտ կարօտ է իւր մարդասիրական նպատակին հաս-
նելու համար:

Պարոնայք:

	բաժին
Զօհրապ Միլիտանեան գործիչ	2
Գարեթէ Գրիտանեան տիկիսեցի	2
Եւսալոյս Երարատեան տիկիսեցի	2
Գի Ռեզաքաղաքէն	2
Պողոս Հասան Գալուէան շուշեցի	2
Մարգար Մառութեան ևս	2
Նոյնը Եւսալոյս անկիւ	2
Սաղաթիւն համար ևս	2
Նոյնը Բաղայ Բեկլարեանին ևս	2

բաժին 14

Դաւրեթու Դիմաղանեան Վարդանեանց ազ-
նուամեծար աղայ Կալուստի ձեռամբ Սիւնեաց ին-
կերութեանը նոր ստորագրող ազգասէր անձանց
յարգի անունները:

Պարոնայք:

	բաժին
Եւրե Երթալամեանց տիկիսեցի	1
Վարդան Սուրբանեցի	1
Մահտեսի Սիւրբայէլ Սալէն	1
Շուշեցի	1
Ստեփան և Եւսալոյս Երթեփեանց	1
Կոմիտաս Եւսեան պոլսեցի	1
Վաճառական	1
Նիւսիանի Սաղաթիւն քիւրցի	2
Եւսալոյս	2
Վերայիշեալ ստորագրողներուն թիւը որ ի թիւստ	14

բաժին 21

Իզմիրու մէջ ստորագրողները.

Պարոնայք:

Մահտեսի Թաւի	4
Սիւստըր Եւսեան	2
Յակոբ սիւրբիսիարցի	1
Հայրենասէր ոմն	3
Եւսալոյս գաղղի կը լսէ օրագիրը	1

բաժին 32

Թիւ 138 Եւսալոյս Երարատեան
մէջ նշանակածնիս

535

ընդ ամէնը մինչև այսօր 567 բաժին:

Զանազան ստանկներուն օրինաւոր արժողութեանց
ցուցակը, որն որ Բարձրագոյն Կրօն հրամանովը
հրատարակուած է:

Ֆրնտըքլը ոսկի Սուրբան	
Համիտի, Ս. Սահմուտի զուռուշ փարայ	
ու Սուստաֆայի	45 10 տիրէմը
Ստամպոլ ոսկի Ս. Սահմուտի	44 30 "
Ստամպոլ ոսկի Ս. Սուստա-	
ֆայի ու Համիտի մինչև Եւսեան	
բոլոր տարին թագաւորութեանը	
սա ետքինին	42 30 "
Ֆրնտըքլը ու ստամպոլի բու-	
պիէ, և կէս մահմուտիէ կարծի	37 25 "
կակուղ մահմուտիէ	45 5 "
Հին տասներկուքնոց, ատի	39 6 "
ևս կակուղ բաւորներովը	35 10 "

Քսաննոց ոսկի հին խայրիէ	41	5	»
Մըսըր	32	15	»
Պարպուզ	31	10	»
Վ. Կենտրինի ոսկի (հալածը)	47		»
Մաճառ, խմբէրիալ և այլն	46	10	»
Լ. Խաւ սթէւէնայ ու Ռոսիայի			
և Բորթուկալի իմբէրիալ	43	10	»
Լ. ուրի տօր ու Կաթոլէոն	42	20	»
Տօպթոն Սպանիայի	41		»
Արծաթեայ հին հարուրնոց			
80, 60, 40, և 30 փարանոց	1	13	»
Շէհատիյէ	2	7	»
Եգիպտոսի մանր փարայ	32		»
Պարսկաստանի արծաթեայ			
ստակ Սափքրան ըսած	2	36	»
ևս Պանապոլ	2	12	»
Տերէքի ըրեալ բոլորը ու կէսը	22	33	հատը
Չիէքի	21	36	»
Հինգ Փռանքնոց	21	10	»
Հինգ տրախմի	18	38	»
Բրեալի հինգերորդը (Բախում)	4	10	»
Նոր քարափանց	16	37	»
Հին քարափանց	16	10	»

Նորին Վ. հասարակութեան կառավարութիւնը որ միշտ հայրաքար խնամք կը տանի հասարակութեան օգտին ու երջանկութեանը համար, ցաւալի սրտիւ կը տեսնեն որ քանի մը ժամանակէ ՚ի վեր ստակներուն զինները չափէն աւելի բարձրադասութիւն մը մնաւ կը լար հասարակօրէն բոլոր վաճառականներուն, ուստի մարդասիրաբար արժան համարեցաւ որ աս բանին համար կատարեալ կարգադրութիւն մը ըլլայ. և որովհետեւ ստակի զիններուն հաստատ մնալը անոր սեփական եղած արժողութիւն տալէն կախած է, որով փոխանակութեան զիններն ալ զիւրին կը լար հաստատ պահէ, աս պատճառով Վ. հասարակ ըրբան որ իր հպատակներուն վրայ հայրական գուծը միշտ պահա չի ընէր, ինքնայօժար բարեհաճեցաւ ստակէն կառավարութեան գանձին ըլլալու օգուտը ետ թողուլ. ու ստով զիւրութիւն մը տալ իր տէրութեանը մէջ եղած աւելորդական գործառնութեանցը:

Արդէն ստակ կտրելու համար հարկաւոր եղած գործիքները ու մեքենաները բերած են Լաւրայէն ու կարգի կը դրին փողերանոցի մէջը. ուստի քանի մը ամիսէն ետքը կը յուսաւոր թէ ոսկիէ ու արծրթէ նոր ստակ կրնայ ելլալ արժանաւոր զիւնով մը:

Բայց մինչև որ նոր ստակէն բաւական գումար տարածել տէրութեան մէջը, քսաննոց (մէնտոհիէն) 20 զուռուշի անցնելու է ու անոր կէսը 10 զուռուշի ու քառորդը 5 զուռուշի. արծրթէ վեցնոցը, իրեքնոցը, հինգնոցը և՛ աս զիններէն աւելի չի պիտի անցնին, որոնք կառավարութիւնը պիտի սկսի ժողովել, երբ որ նոր ստակը ելլայ նէ:

Փողերանոցի կողմանէ ընտրուած երեւելի վաճառականներուն խորհրդակցութեամբ լըրտ սթէւէնի զինը 110 զուռուշի որոշեցաւ. ու ստոր համեմատութեամբ օսմանեան հին ստակներուն ու օտար տէրութեանց ստակներուն համար մասնաւոր զիններ որոշուեցան ինչպէս վերը եղած ցուցակէն յայտնի կը լար. ուստի կառավարութիւնը սատիկ հրամանով ծանուցեր է հասարակութեանը թէ, ո՞վ որ յիշեալ ստակներէն քովը ունի թող տանի փողը:

Լանոցի կողմանէ դրած պաշտօնատարներուն տայ (որոնցմէ ամէն քաղաք խրկուեցան), ու անոնց սահմանաւ արժողութիւնը առնէ. ու աս հրամանին անհաղանդ գտնուողներուն անշուշտ արժանաւոր պատիժը պիտի տրել:

ԱՌԵՏՐԱՆԱ ԽԱՒԻՔԻ

ԳԼԳԴԻՆ

Մարտիս, 29 Յունիս:

Սուսամ: Տասը օրէ ՚ի վեր զինները շատ իջան. աս օրվան արժողութիւնը 43½ Փռանք է 100 քիլոլըրամը՝ անցած օրը 1500 խանթար ծախեցաւ 44 Փռանքի հարուրին 1½ վար իջեցուցնելով:

Կոտաւտ: Ռուսիայի տեսակէն խիստ քիչ կայ, 2000 խանթարի չափ զրեթէ, որն որ 26 Փռանքի կրնայ աւելնել հարուր քիլոլըրամը: Բումբէլի ու Լնատուրի սուսամ շատ կայ. առաջինին զինը՝ 28 Փռանք ու երկրորդին 27 Փռանք է: Լազիպոսի սուսամը անունով միայն 25 Փռանք է:

Չէթ: Գործառնելի տեսակը խիստ թուլ է. մէկ մաս Լ. յիւլըիսի ձէթ 107 Փռանքի ծախեցաւ էթթօլիթրան (75 օխան). կը հաստատուն թէ 105½ Փռանքի ալ ծախեր է մէկը ստակի հարկաւորութիւն ունենալուն համար:

Մետաքս: Կուզի ու շատ գործառնութիւններ կ'ընեն աս շաբաթ հետեւեալ զիններով:

Պրուսայի երկան խալցան	12½-15
» կարճ խալցան	13½-15
Մեշտուտ	16½-17½
ևս երկան խալցան	15
Պարսկաստանիներ	10-13

Լս վերջի տեսակէն հարուր պալեա եկաւ աս շաբաթ:


Շէհիլ: Խիստ թուլ է ու զինները անունով միայն են, առաջին տեսակը՝ 2-2½ Փռանք է. խիլիլի պը՝ 1-1½ կէս քիլոլըրամը:

Բուրդ: Կամապէս թուլ է. Խիլիբուր բանաւած տուրջին տեսակին զինը՝ 85-90 Փռանք է յիսուն քիլոլըրամը. երկրորդին՝ 57-60:



Լատիանք բարեխառնութեան Օմիւնիոյ, գիտեալ ՚ի միջօրէի և եգեալ ըստ բաժանման Ռոմուրի:

	՚ի ստուերի:	Յարեւ:
Ռ. բաթ	9 Յուլիս + 24	աստիճան 27½ աս
Շաբաթ	10 " + 24½	" 28½ "
Կիւրակ	11 " + 24½	" 27½ "
Կրկուշաբաթի	12 " + 22½	" 27 "
Կրկշաբաթի	13 " + 23	" 27 "
Չորեքշաբաթի	14 " + 23	" 27½ "
Հինգշաբաթի	15 " + 22½	" 26 "



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՄ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

Փետրեայ քննող Խորհրդացի և Գլխաւորին թարգմանած զբաւառ, աշխատասիրութեամբ Վենետիկի Միւլթարեան ուստին վերադառնալու է. Բերթիւ վարդապետ Ալեքսանդր: Կըրթիս Փէթրի գաղղիացին անցած դարուն սկիզբները:

Ճաղկեցաւ, ու գրեթէ նոյն արեւմտեան ունի սուրբ եկեղեցւոյ և իր հայրենեացը վրայ ինչ որ ունեցան Ֆենեւի և Պաիւէ. զբաւածքին ոճովն ալ անոնց նման ըլլալով, աղէկ հանդիպեցաւ որ ան երկուքին երեւելի զբերէն ետեւ տար ալ գեղեցիկ գրեթէ մէկը հայերէն հրատարակի, որ է աս Խորհրդացի-ոչ ու հին արեւելի գրիտոնէից սովորութիւնները: Այսպիսի պարզ անուշ ու ճարտասան ոճով մը գրուած է աս գիրքը որ կարգադրելու միտքը և սիրտը միանգամայն կը լրջուի ու կը զգուշանայ. անոր համար գրեթէ Եւրոպայի ամէն լեզուներով թարգմանուած է. ու նաեւ հռոմէրէն աշխարհագրաւ: Գլխին է 6 ֆրանք, կամ 50 զուռուշ:

Մասամբ Միւլթարեան ծնուցիչը (էպէ) պատիւ կը հաւմարի անձին ծանուցանել հասարակութեանը թէ, իր արհեստին միջոցովը կրնայ օգնութիւն ընել ծննդաբեր կնիկներուն, որոնք կը բարեհաճին վատահանալ իրեն յաջողութեանը: Լս արհեստին հարկաւոր ուսմունքները խրեւտ ըրած է քաջահմուտ վարպետներու վերականգնութեան աւել, ու իր բարոյականութեանը համար ալ խիստ պատուաւոր ու վաւերական վկայականներ ունի ձեռքը: Լս ասոնք են իր տուած երաշխատութիւնները, որոնց արժանաւորութիւնը անշուշտ աղէկ պէտք է որ ծանչցուի ասանկ քաջքի մը մէջ, որ տեղ տղայաբերութիւնը շատ անգամ խիստ աղետալի հետեւանքներ կ'ունենայ. որովհետեւ դժբաղդաբար շատ տղէտ ու անփորձ մանկաբարձներ (էպէ) թէ կնիկ և թէ էրիկ մարդերէն աս աղետական արհեստը կը դործանեն որուն վրայօք ամենեւին տեղի կ'ունեն չունին:

Յիշեալ մանկաբարձին առնել Գաղղիոյ հիւպատոսարանին քովը է:

Վ. Կենտրինի Միւլթարեան ուստին Բաղմալիկ անուն օրագիրը ընդունել ուզողը՝ կրնայ Խիլիբուր շաբաթ Լաւրատեանին գրտուունը ստորագրել: Ուրիշ քաղքները ևս, ուր տեղ յատուկ գործակալ չունի տակաւին Բաղմալիկ, կրնայ ո՞վ որ ուզէ Լաւրայի Լաւրատեանին յարգի գործակալներուն գրտուունը ստորագրել:

Յիշեալ օրագիրը ամիսը մէյ մը կ'ելլայ՝ երկըր կու հատ 16 երես ամէն մէկը՝ ութամալ տեղորակով:

Տարեկան ստորագրութեան զինը, 3 արծաթ ֆիօրին է, գրեթէ 36 զուռուշ. ճամբու ծախքը աւանդին վրայ է:



ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ա. Օրագիրը շաբաթը անգամ մը կը տպուի. տարեկան տոբարդութեան զինը՝ 120 զուռուշ է կանխիկ (փէշն) ով որ ուզէ կրնայ ստորագրել:

Խիլիբուր օրագրութեան տպարանը:
Պրիւս Վալտէր Խանը Շահապէան Սարգիս տղային գրաւ:
Պրուսա Գաղղիական Միւլթարեան ու Գրիգոր տղային մաղաքան:
Ալեքսանդրիոս Ալեքսանդրեան Ս. Ալեքսան տղային գրաւունը:
Յուպէ Սրապիսեան տղայ Յուպիս գրաւունը:
Ռոքատ Արեւեան Գրիգոր տղային գրաւունը:
Կարին Լազարեան Յարութիւն տղային մաղաքան:
Անի Խառապեան Լազար տղային տունը:
Եւջ Պր. Բրեան տղայ եղբոր մաղաքան:
Պաղտատ Անգլիոյ առաջին թարգման տղայ Խալիկին տունը:
Մարգարէ Աթաբեան Պարս Սիմեոնի վաճառատունը:
Թիֆլիզ Ռուսաց ատոմանաւոր Կարեան արտուել Յա. կոր վարժապետին գրաւունը:

Իսաբէ Երմանեան Վարդանեան տղայ Գալուստին վա:
Թեհրան Աւարեանց թարգման Խանին բնակարանը:
Սպահան Ալիբեկ տղայ Ալիբեկին վաճառատունը:
Պանդա յարգի օրոնոց Ալանուր որդւոյ և ընկերաց վաճա:
Կալիթա սրտին Փ. Ա. Դիպրեանի գրաւունը:
Մարտա օրոնոց Սէթ և ընկերաց վաճառատունը:
Սիւնիկաւոր ու Պաղմալի յարգի սրտնոց Սէթ եղբոր գրաւ:



Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԱՊՕԵԱՆ